

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ

017680138

Գիրքը տպագրված է Գնահատման և թեստավորման կենտրոնում:

Տպարանակը՝ լրացողիչ 1000 օրինակ, 28 էջ:

Ք. Երևան, Այգեստան 9/4, հեռ. 57.63.37

Գիրքը վաճառքի ենթակա չէ:

www.atc.am

ԵՐԵՎԱՆ 2011

ՀՏԴ 373:57 (03)
ԳՄԴ 74.2+28 յ2
Կ 414

Կազմողներ՝	ՊՈՂՈՍ	ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ
	ՈՈՒԶԱՆՆԱ	ԳՐԻԳՈՐՅԱՆ
	ԱՆԱՀԻԾ	ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ
	ԻՐԱ	ՍԱՀԱԿՅԱՆ
	ՎԱՐՄԵՆԻԿ	ԳՅՈՒԼԱԶՅՅԱՆ
	ԷՍՍԱ	ՄԵԼքՈՆՅԱՆ
	ԼԻԼԻԹ	ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Խմբագիր՝	ՊՈՂՈՍ	ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆ

Բովանդակություն

Նախաբան	3
Զննական թեսահ կառուցվածքը	7
Պատասխանների ձևաբույր	18
Պատասխանների ձևաբույրի լրացման կարգը	19
Խորհուրդներ և ցուցումներ	21
Թեսուում առկա առաջադրանքների նմուշներ	22

Կ 414 Կենսաբանություն : Պետական ավարտական և միասնական քննության ուղեցույց: Գնահատման և թեստավորման կենտրոն, 2011. 28 էջ:

ԳՄԴ 74.2+28 յ2

ISBN 978-99941-864-4-0

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Կենսաբանության պետական ավարտական և միասնական քննության ուղեցույցի հիմնական նպատակն է ներկայացնել կենսաբանության քննական թեստերում ներառվող նյութի թեմատիկ-բովանդակային սահմանները, որը կօգնի շրջանավարտներին և դիմորդներին ճիշտ կողմնորոշվել և քննությանը լավագույնս նախապատրաստվել, ինչպես նաև որպես ուղենիշ կծառայի թեստեր կազմողների համար: Ուղեցույցը ներկայացնում է քննության թեստի կառուցվածքը, ծրագրային նյութի ընդորկման սահմանները, պատասխանների ձևարդիքի նմուշը, պատասխանների ձևարդիքի լրացման կարգը, խորհուրդներ, ցուցումներ, առաջադրանքների տեսակները:

2012թ. կենսաբանության պետական ավարտական և միասնական քննության համար որպես հիմք և սկզբնաղբյուր են ընդունվում «Կենսաբանություն» առարկայի ուսումնական ծրագիրը և դպրոցական հետևյալ դասագրքերը.

- «Հանրակրթական հիմնական դպրոցի «Կենսաբանություն» առարկայի չափորոշիչ և ծրագիր», ԿԳ նախարարություն, կրթական ծրագրերի կենտրոն, ԿԱԲ, Երևան, 2008թ.:
- «Հանրակրթական ավագ դպրոցի «Կենսաբանություն» առարկայի չափորոշիչներ և ծրագրեր», ԿԳ նախարարություն, կրթական ծրագրերի կենտրոն, ԿԱԲ, Երևան, 2009թ.:
- Միսակյան Ս., Թանգամյան Տ., Գասպարյան Ա., «Կենսաբանություն. բույսեր», դասագիրք հանրակրթական դպրոցների 5-րդ դասարանի համար, «Առերեսում»-Անի հրատ., Երևան, 1999 թ.:
- Միսակյան Ս., Թանգամյան Տ., Գասպարյան Ա., «Կենսաբանություն. բույսեր, բակտերիաներ, սնկեր, քարարոսեր, կենդանիներ», դասագիրք հանրակրթական դպրոցների 6-րդ դասարանի համար, «Առերեսում»-Անի հրատ., Երևան, 1999 թ.:
- Զիվանյան Կ., Դանիելյան Ֆ., Ռուսլյան Ռ., Յավույան Է., «Կենսաբանություն. կենդանիներ», դասագիրք հանրակրթական դպրոցների 7-րդ դասարանի համար, «Մակմիլան-Արմենիա» հրատ., Երևան, 2005 թ.:
- Մինասյան Ս., Աղամյան Ծ., Հովհաննիսյան Հ., «Կենսաբանություն. մարդ», դասագիրք հանրակրթական դպրոցի 8-րդ դասարանի համար, «Մակմիլան-Արմենիա» հրատ., Երևան, 2005թ.:

- Պոլյանսկի Յու., Բրաուն Ա., Վերգիլին Ն., Դանիլևսկի Ա., Ժիմկին Լ., Կորտունսկայա Վ., Սոլյանովա Կ., «Ընդհանուր կենսաբանություն», դասագիրք համբակրական դպրոցի 9-րդ դասարանի համար, «ԱՍՏՎԻԿ-59» հրատ., Երևան, 2000թ.:
- Գևորգյան Է., Դանիելյան Ֆ., Եսայան Ա., Սևոյան Գ. «Կենսաբանություն» դասագիրք ավագ դպրոցի 11-րդ դասարանի բնագիտամաթեմատիկական և ընդհանուր հոսքների համար, «ԱՍՏՎԻԿ Գրատուն» հրատ., Երևան, 2010թ.:
- Գևորգյան Է., Դանիելյան Ֆ., Եսայան Ա., Սևոյան Գ. «Կենսաբանություն» դասագիրք ավագ դպրոցի 12-րդ դասարանի բնագիտամաթեմատիկական և ընդհանուր հոսքների համար «ԱՍՏՎԻԿ Գրատուն» հրատ., Երևան, 2011թ.:
- Սևոյան Գ., «Կենսաբանության խնդիրների ժողովածու», խնդրագիրը միջնակարգ դպրոցի 8-10-րդ դասարանների համար, Երևան, «Տիրաստ» ՊՓԲԸ, 1999թ.:

Թեստի կառուցվածքը, բովանդակային ընդգրկումը, տարրեր մակարդակների ծավալն ու բարդության աստիճանը որոշվել է կրթության բովանդակային բաղադրիչի (գիտելիք, կարողություններ ու հմտություններ, արթեքային համակարգ) և չափորոշիչների եռաստիճան պահանջներին համապատասխան:

Թեստում ներառվել են առաջադրանքներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգելու՝

- a) շրջանավարտի տեսական գիտելիքները,
- b) նորա կարողություններն ու հմտությունները.
 - կենսաբանական պրոցեսների և երևույթների հաջորդականության իմացությունն ու պարզաբանումը,
 - կենսաբանական երևույթների և կենսահամակարգերի կառուցվածքի ու ֆունկցիայի միջև պատճառահետևանքային կապերի համապատասխանությունը որոշելու կարողությունը,
 - գործնքացները և երևույթները վերլուծելու կարողությունը,
 - կենսաբանական խնդիրներ լուծելու ունակությունը,
- c) արթեքային համակարգում ճիշտ կողմնորոշվելու ունակությունները, տրամաբանական մտածողությունն ու ստեղծագործական ներուժը:

Թեստի բովանդակային մասն ընդգրկում է կենսաբանության հետևյալ բաժինները.

 - բույսեր, սննդեր,
 - կենդանիներ,
 - մարդ,
 - ընդհանուր կենսաբանություն, որի ենթաբաժիններն են՝
 - բջջաբանության հիմունքները,

- Ի-ՌՆԹ-ի մոլեկուլը կազմված է 968 նուկլեոտիդներից:

 1. Որոշել, թե քանի՞ ամինաբբուներից բաղկացած շղթա է այն կողավորում:
 2. Որոշել, թե քանի՞ նուկլեոտիդներից է կազմված ԴՆԹ-ի մոլեկուլի այն հատվածը, որից ստացվել է այդ ի-ՌՆԹ-ն:
 3. Որոշել ԴՆԹ-ի այդ հատվածի երկարությունը, եթե մեկ նուկլեոտիդի երկարությունը 0,34 նմ է:

- Ինչո՞վ են տարբերվում բույսերը կենդանիներից: Ո՞ր շարքում են նշված բոլոր ճիշտ պնդումները:
 - A. բոլոր բույսերն ավտոտրոֆ են, իսկ կենդանիները՝ հետերոտրոֆ
 - B. բույսերի ճնշող մեծամասնությունը ավտոտրոֆ է, կենդանիները՝ հետերոտրոֆ
 - C. բույսերի աճը սահմանափակ է, իսկ կենդանիներն՝ անհրաժեշտության դեպքում աճում են կյանքի ցանկացած փուլով
 - D. բույսերն աճում են ամբողջ կյանքի ընթացքում, իսկ կենդանիները՝ միայն կյանքի սկզբնական փուլում
 - E. բուսական բջիջները պարունակում են պլաստիդներ, միտոռոնդրիումներ, բջջապատ, վակուոլներ, իսկ կենդանական բջիջները՝ ոչ
 - F. բուսական բջիջները պարունակում են պլաստիդներ, քլորոֆիլ, բջջապատ, վակուոլներ, իսկ կենդանական բջիջները՝ ոչ
 - 1) ADF
 - 2) ABC
 - 3) BDEF
 - 4) BDF
- Ո՞ր շարքում են նշված բոլոր սխալ պնդումները:
 - A. օղակավոր որդերը ամենաբարձր կազմավորված կենդանիներն են՝ որդերի այլ տիպերի համեմատ
 - B. օղակավոր որդերն ունեն բաց արյունատար համակարգ
 - C. օղակավոր որդերի մարմինը կազմված է առանձին հատվածներից
 - D. օղակավոր որդերի մոտ բացակայում է մարմնի խոռոշը
 - E. օղակավոր որդերի նյարդային համակարգը կազմված է շորջկանային օղակից և մեջքի նյարդային շղթայից
 - F. օղակավոր որդերի մարմինը պատված է թեփուկներով
 - 1) ACF
 - 2) BCD
 - 3) ADE
 - 4) BDEF

- օրգանիզմների բազմացումը և անհատական զարգացումը,
- գենետիկայի հիմունքները,
- էվոլյուցիոն տեսություն, օրգանական աշխարհի զարգացումը,
- էկոլոգիայի հիմունքները,
- կենսլորտ, նրա կառուցվածքն ու ֆունկցիաները,
- օրգանիզմների միջև փոխհարաբերությունները:

Թեստում ընդգրկված առաջադրանքների քանակական համամասնությունը որոշվել է՝ հաշվի առնելով ինչպես տվյալ բաժնին հատկացված ժամաքանակը դպրոցական առարկայական ծրագրում, այնպես էլ համապատասխան տարիքային խմբում գիտելիքների յուրացման համար անհրաժեշտ ժամաքանակը: Հաշվի է առնված նաև այն փաստը, որ ընդհանուր կենսաբանության դասընթացը բազմաթիվ առումներով ընդգրկում է մնացած բոլոր բաժիններում ներկայացված նյութը:

Թեսադիր ներկայացվող տարբերակների բոլոր առաջադրանքներում մի քանի պատասխաններից առաջարկվում է ընտրել միակ ճիշտ պատասխանը: Առաջադրանքները հիմնված են հասկացությունների և երևոյթների համապատասխանության բացահայտման, պրոցեսների իրականացման հաջորդականության, օրինաչափությունների միջև կապերի իմացության վրա:

Կենսաբանության թեստը բաղկացած է Ա և Բ մակարդակներից.

Ա մակարդակը նախատեսված է շրջանավարտի նվազագույն անհրաժեշտ գիտելիքների ստուգման, **Բ** մակարդակը՝ առարկայի համեմատաբար խորը և լիարժեք իմացության ստուգման համար:

Ա մակարդակն ընդգրկում է 50 առաջադրանք:

Ա մակարդակում «Կենսաբանություն» դասընթացի բաժինները ներկայացված են հետևյալ համամասնությամբ.

- բույսեր, սնկեր՝ 5 առաջադրանք (Ա1-Ա5),

- կենդանաբանություն՝ 5 առաջադրանք (Ա6-Ա10),

- մարդ՝ 12 առաջադրանք (Ա11-Ա22),

- ընդհանուր կենսաբանություն՝ 24 առաջադրանք (Ա23-Ա46),

- խնդիրներ՝ 4 առաջադրանք (47-50):

Բ մակարդակն ընդգրկում է 30 առաջադրանք:

Առաջադրանքները տարբեր են և պահանջում են նշել՝

- երևոյթների միջև կապերի, կառուցվածքի և ֆունկցիայի համապատասխանություն՝ 4 առաջադրանք (51-54),

- պրոցեսների և երևոյթների հաջորդականությունը՝ 4 առաջադրանք (55-58),
- բոլոր ճիշտ պատասխանները պարունակող տարրերակը՝ 5 առաջադրանք (59-63),
- բոլոր միայ պատասխանները պարունակող տարրերակը՝ 5 առաջադրանք (64-68),
- խնդիրների պատասխանը՝ 12 առաջադրանք (69-80):

Բ մակարդակում ներկայացված են «Կենսաբանություն» դասընթացի հավելվածում նշված բոլոր բաժինները:

Ա մակարդակի 4 խնդիրները հենքային բարդության են, որոնց յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

Բ մակարդակի 12 խնդիրները միջին բարդության և բարդ խնդիրներ են: Յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

- Օրգանիզմի պաշտպանական ո՞ր հատկությունը (նշված է ձախ սյունակում) իմունիտետի ո՞ր տեսակին (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Ստորև տրված համապատասխանությունների ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ:

Պաշտպանական հատկություն

Իմունիտետի տեսակ

- | | |
|--|-----------|
| A. տվյալ տեսակի բոլոր առանձնյակներին | 1. ակտիվ |
| B. հակամարմինների ստացում բուժիչ շիճուկի կազմում | 2. պասիվ |
| C. հակամարմինների առաջացում արյան մեջ պատվաստման արդյունքում | 3. քնածին |
| D. հիվանդության նկատմամբ ամենակարևոր ժամանակին սերնդեսերունդ | |

- 1) A-2, B-1, C-1, D-2
- 2) A-1, B-3, C-2, D-2
- 3) A-3, B-1, C-2, D-3
- 4) A-3, B-2, C-1, D-3

- Ի՞նչ հաջորդականությանը են հաղորդվում ձայնային տառանումները լսողական ընկալիչներին: Ընտրել ճիշտ պատասխանը:

- | |
|----------------------------------|
| A. արտաքին ականջ |
| B. ձվաձև պատուհանի թաղանք |
| C. լսողական ուկրիկներ |
| D. թմբկաբաղանք |
| E. խխունջի հեղուկ |
| F. լսողական զգայարանի ընկալիչներ |

- 1) DBECFA
- 2) ABDCEF
- 3) ADCBFEF
- 4) FABCDE

Թեստում առկա առաջադրանքների տեսակների նմուշներ

• Որտե՞ղ են առաջանում կորիզակները:

- 1) քրոմոսմների որոշակի հատվածներում
- 2) ողորկ էնդոպլազմային ցանցի բաղանքների վրա
- 3) կորիզաթաղանթի ներքին բաղանթի վրա
- 4) բջջային կենտրոնում

• Սպիտակուցի մոլեկուլը կազմված է 300 ամինաթթուներից:

1. Քանի՞ նուկլեոտիդներից է բաղկացած ԴՆԹ-ի մոլեկուլի հատվածը, որը կոդավորում է տվյալ սպիտակուցի մոլեկուլը:

- 1) 300
- 2) 600
- 3) 1800
- 4) 900

2. Ի՞նչ երկարություն ունի ԴՆԹ-ի այդ հատվածը, եթե մեկ նուկլեոտիդի երկարությունը 0,34 նմ է:

- 1) 306
- 2) 102
- 3) 204
- 4) 612

ԶՆՆԱԿԱՆ ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Կենսաբանության ավարտական և միասնական քննության թեստը ներառում է ընտրովի և կարճ պատասխաններով 80 առաջադրանք (Ա1-Ա50 և Բ51-Բ80):

Կենսաբանության թեստը բաղկացած է Ա և Բ մակարդակներից:

Ա մակարդակի առաջադրանքները համապատասխանում են սովորողի նվազագույն պատրաստվածությանը և նախատեսված են ավարտական քննություն հանձնող շրջանավարտների և միասնական քննություն հանձնող դիմորդների ավարտական մասի համար: Ա մակարդակի առաջադրանքներն ունեն ընտրովի 4 պատասխաններ, որոնցից միայն մեկն է ճիշտ:

Բ մակարդակը պահանջում է սովորողի միջին և բարձր պատրաստվածություն և Ա մակարդակի հետ միասին նախատեսված է միասնական քննության համար: Բ մակարդակի առաջադրանքներն ունեն ընտրովի 4 պատասխաններ:

Ա և Բ մակարդակների յուրաքանչյուր թեստային առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

Ա մակարդակը պարունակում է 50 ընտրովի պատասխանով առաջադրանքներ, որոնցից 4-ը խնդիրներ են: Ա մակարդակը գնահատվում է 50 միավոր:

Բ մակարդակը պարունակում է 30 առաջադրանք և գնահատվում է ընդհանուր 30 միավոր. 51-ից մինչև 68-ը՝ 18 միավոր, 69-ից մինչև 80-ը խնդիրներ են, որոնք ընդհանուր գնահատվում են 12 միավոր:

Զննական թեստում առաջադրանքները դասակարգվում են սոորյ բերված չորս հատկանիշներով.

1. ըստ առաջադրանքների ներկայացման ձևի,
2. ըստ առաջադրանքի բարդության աստիճանի,
3. ըստ դասընթացի բաժինների,
4. ըստ գործունեության տեսակի:

1. Առաջադրանքների բաշխումն ըստ ներկայացման ձևի

Ա մակարդակում ընդգրկված են հենքային և միջին բարդության թեստային առաջադրանքներ և հենքային բարդության 4 խնդիր: Բ մակարդակում ընդգրկված են միջին բարդության և բարդ թեստային առաջադրանքներ և խնդիրներ (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հ/Հ	Թեստի մակար- դակները	Առաջադրանքներն ըստ ներկայացման ձևի	Առաջադր- անքների քանակը	Նախանա- կան առա- վելագույն միավորը	Մասնաբա- ժինն ըստ միավոր- ների (%)
1	Ա	ընտրովի պատաս- խանով, հենքային և միջին բարդության	46	46	57.5
2	Ա	հենքային բարդութ- յան խնդիրներ	4	4	5
3	Բ	ընտրովի պատաս- խանով միջին բար- դության և բարդ	18	18	22.5
4	Բ	միջին բարդության և ավելի բարդ խնդիր- ներ՝ ենթասահադր- անքներով	12	12	15
		Ընդամենը	80	80	100

2. Առաջադրանքների բաշխումն ըստ բարդության աստիճանի

Ավարտական և միասնական քննության թեստային աշխատանքում յուրաքանչյուր բաժին նպատակ ունի ստուգելու շրջանավարտի (դիմորդի) գիտելիքները՝ կրթության բովանդակային բաղադրիչներին և չափորոշչների եռաստիճան պահանջներին համապատասխան:

Ա մակարդակում ընդգրկված են հենքային և միջին բարդության ընտրովի պատասխանով 50 առաջադրանքներ, որոնցով ստուգվում են շրջանավարտների՝ կենսաբանության դասընթացի հենքային (բազային) գիտելիքները՝ համապատասխան հանրակրթական դպրոցի ծրագրով նախատեսված նվազագույն և միջին պահանջների: Դրանք պահանջում են ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող գիտելիքներ և ոչ բարդ իրադրություններում այդ գիտելիքները կիրառելու կարողություն:

Բ մակարդակում ավելի բարդ առաջադրանքներ են՝ համեմատաբար բարդ նյութի վերաբերյալ շրջանավարտի գիտելիքները ստուգելու համար: Այս առաջադրանքները պահանջում են ուսումնասիրված ծրագրային նյութի բովանդակությանը վերաբերող կայուն գիտելիքներ, տարբեր իրադրություններում դրանք կիրառելու կարողություն:

Զննական թեստում առաջադրանքների բաշխումն ըստ բարդության ներկայացված է աղյուսակ 2-ում:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԵՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Խիստ ուշադրություն դարձրեք քննական թեստի առաջադրանքների կատարմանը:

Խորհուրդ է տրվում ուշադիր կարդալ, ընտրել ճիշտ պատասխանը և համեմատել տրված պատասխանների տարրերակների հետ:

Թեստը կազմված է այնպիս, որ բոլոր առաջադրանքներում առկա է միայն 1 ճիշտ պատասխան:

Առաջադրանքները տարբեր բարդության են: Ա մակարդակի բոլոր առաջադրանքներում և Բ մակարդակի 51-73-րդ առաջադրանքներում պետք է ընտրեք պատասխանի 4 հնարավոր տարրերակներից միակ ճիշտը: 74-80-րդ կարճ պատասխանով առաջադրանքները համարվում են կատարված, եթե շրջանավարտի ներկայացրած պատասխանը (բվային արժեքը) համընկնում է ճիշտ պատասխանի հետ:

Առաջադրանքները հաջող կատարելու և բարձր արդյունք ստանալու համար շատ կարևոր է ժամանակի ճիշտ օգտագործումը: Եթե առաջադրանքն ուշադիր կարդալուց հետո չեք կողմնորոշվում, նպատակահարմար է անցնել հաջորդ առաջադրանքի կատարմանը: Կատարելով բոլոր այն առաջադրանքները, որոնց ճիշտ պատասխանի ընտրությունը կասկած չի հարուցում, վերադարձրեք այն առաջադրանքներին, որոնց կատարման համար ավելի երկար ժամանակ է պահանջվում:

Ճիշեք, որ ընտրովի պատասխաններով առաջադրանքների պատասխաններից միևնույն ճիշտը:

Թեստ-գրքույկի էջերի դաստարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագործության համար:

Թեստ-գրքույկը չի ստուգվում:

Ստուգվում է միայն պատասխանների ճևաքույքը:

Կրկին հիշեցնենք, որ պատասխանների ճևաքույքի ճիշտ լրացումից է նաև կախված ձեր քննական միավորը:

Եթե 74-րդ առաջադրանքի պատասխանը 0.008 է, ապա այն պետք է կլորացնել մինչև հարյուրերորդական նիշը և լրացնել հետևյալ ձևով՝



Զետքում տրված է սխալն ուղղելու 5 հնարավորություն, որից 3-ը՝ Ա մակարդակում, 2-ը՝ Բ մակարդակում։

Ա մակարդակում թույլ տված սխալը կարելի է ուղղել Ա-ի սխալների ուղղման դաշտում։ Դրա համար հատկացված տեղում Ա տառից հետո անհրաժեշտ է գրել առաջադրանքի համարը և միշտ պատասխանին համապատասխանող տեղում դնել «X» նշանը։



Բ մակարդակում թույլ տված սխալը կարելի է ուղղել Բ-ի սխալների ուղղման դաշտում։

Զետքուղղը լրացվում է սև գեղային գրիչով։

Հ/Հ	Թեստի մակարդակներ	Առաջադրանքների բարդության աստիճանը	Առաջադրների քանակը	Նախնական առավելագույն միավորը	Մասնաբանություն (%)
1	Ա	Հենքային և միջին բարդության	50	50	62.5
2	Բ	Միջին բարդության և բարդ, ավելի բարդ	30	30	37.5
Ընդամենը			80	80	100

3. Առաջադրանքների բաշխումն ըստ դասընթացի բաժինների

«Կենսաբանություն» առարկայի պետական ավարտական և միասնական քնննական թեստերում ընդգրկված են առարկայական ծրագրի ծավալին և բովանդակությանը համապատասխանող առաջադրանքներ (տես սահմանագրային հայուսակ 3 և հավելված 1):

Հ/Հ	«Կենսաբանություն» առարկայի հիմնական բաժինները	Առաջադրանքների քանակը	Մասնաբանություն (%)
1	Ընդհանուր կենսաբանություն	51	63.75
2	Մարդ	16	20
3	Կենդանիներ	7	8.75
4	Բույսեր, սնկեր	6	7.5
Ընդամենը			80
			100

4. Առաջադրանքների բաշխումն ըստ գործունեության տեսակների

Քննական թեստում ընդգրկված առաջադրանքներով ստուգվում են շրջանավարտի գիտելիքների հենքային մակարդակը, տարրեր իրավիճակներում դրանք կիրառելու կարողությունները, ինչպես նաև՝ առավել բարդ առաջադրանքներում կողմնորոշվելու և երևոյթներն արժելորելու հմտությունները:

Առաջադրանքներում համադրված են գործունեության հետևյալ հիմնական տեսակները.

- անվանում,
- որոշում,
- բնութագրում,
- հաշվում,
- տարրերակում,
- գործնաբացերի և երևոյթների հաջորդականության իմացություն և պարզաբանում,
- գործնիքացների և երևոյթների վերլուծում,
- խնդիրների լուծում:

Առաջադրանքները կարող են ընդգրկել նաև գործունեության մի քանի տեսակ:

5. Առաջադրանքների կատարման համար հատկացվող ժամանակը

1. Ավարտական քննական թեստի առաջադրանքների կատարման համար տրամադրվում է 150 րոպե:
2. Միասնական քննական թեստի առաջադրանքների կատարման համար տրամադրվում է 180 րոպե:

6. Քննական առաջադրանքի գնահատման կարգը

1. Ա մակարդակի յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը՝ 0:
2. Բ մակարդակի յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր, սխալ պատասխանը՝ 0:

7. Քննության անցկացման և աշխատանքի ստուգման պայմանները

1. Քննության ժամանակ մասնագետների ներկայությունը քննասենյակում արգելվում է:
2. Քննասենյակում թույլատրվում է ունենալ պարզագույն հաշվի:
3. Համակարգչային ծրագրերի կիրառմանը ստուգվում է միայն շրջանավարտի լրացրած պատասխանների ձևարուղը:

ՊԱՏԱՍԽԱՆԵՐԻ ԶԵՎԱԹՂԹԻ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Քննության ընթացքում առաջադրանքներին պատասխաններու համար շրջանավարտը պետք է լրացնի պատասխանների ձևարուղը, որի ճիշտ լրացումից է նաև կախված շրջանավարտի քննական միավորը:

Պատասխանների ձևարուղում **Ա** և **Բ** մակարդակի առաջադրանքներից յուրաքանչյուր առաջադրանքի համարի ներքևում տրված են համապատասխան թվով վանդակներ: Տրված առաջադրանքի ճիշտ պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է տվյալ պատասխանի համարին համապատասխանող վանդակում դնել «**X**» նշանը: Օրինակ՝ եթե 51-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը 2-րդն է, ապա ձևարուղում պատասխանը պետք է նշել հետևյալ ձևով՝

	51
1	<input type="checkbox"/>
2	X
3	<input type="checkbox"/>
4	<input type="checkbox"/>

74-80-րդ կարճ պատասխանով առաջադրանքները համարվում են կատարված, եթե շրջանավարտի ներկայացրած պատասխանը (թվային արժեքը) համընկնում է ճիշտ պատասխանի հետ:

Այս առաջադրանքներին պատասխանների անհրաժեշտ է գրել կարճ պատասխանը՝ նախատեսված հորիզոնական 6 վանդակներից յուրաքանչյուրում գրելով մեկ թվանշան: Առաջին 4 վանդակները ամբողջ թվերի համար են, իսկ հաջորդ երկուուր կոտորակային: Առաջադրանքի պատասխան կարող է լինել ինչպես ամբողջ թիվ, այնպես էլ կոտորակային: Եթե պատասխանը երկնիշ ամբողջ թիվ է, ապա այն պետք է լրացնել նշված 6 վանդակներից երրորդում և չորրորդում՝ բաց թողնելով առաջին և երկրորդ վանդակները: Օրինակ՝ եթե 75-րդ առաջադրանքի պատասխանը 56 երկնիշ թիվն է, ապա այն պետք է լրացնել հետևյալ ձևով՝

75	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	56	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
----	--------------------------	--------------------------	----	--------------------------	--------------------------

Եթե 76-րդ առաջադրանքի պատասխանը, օրինակ, 56.1 է, ապա այն պետք է լրացնել հետևյալ ձևով՝

76	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	56.1	<input type="checkbox"/>
----	--------------------------	--------------------------	------	--------------------------

ՊԱՏԱՍԽԱՆԱՆԵՐԻ ԶԵՎԱԹՈՒՂԹ

2012 թ. Միամական քննուրում

Պատասխանների ձևաթուղթ
Կենսաբանություն

Ազգանուն					
Անուն	Հայրանուն				
Ազգական համար					
Եթեք ուսուցիչ					
<ul style="list-style-type: none"> • Լրացնեք միայն սև գելային գրիչով: • Եթե ընտրած տարրերին համարին հաճապատճառություն պահպակում դրեք X նշանը (միանալու պահանջական ավելի վաղովակերպություն աշխատաված ջշում կիսաթարի մխայ): • Բարեք գրեք հետևյալ տեսքով՝ 1 2 3 4 5 6 7 8 9 0 					
0 7	Թեսություն №	1	2	3	4
Ա Ամպեսոսկ	1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24	1	2	3	4
Դասապահության համար	1 2 3 4	1 2 3 4	1 2 3 4	1 2 3 4	1 2 3 4
Դասապահության համար	1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24	1	2	3	4
Դասապահության համար	1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24	1	2	3	4
Դասապահության համար	47 48 49 50	1 2 3 4	1 2 3 4	1 2 3 4	1 2 3 4
Ա Ամպեսոսկ	51 52 53 54 55 56 57 58 59 60 61 62 63 64 65 66 67 68 69 70 71 72 73	1	2	3	4
Դասապահության համար	74 75 76 77 78 79 80	1 2 3 4	1 2 3 4	1 2 3 4	Ամերող ձևաթուղթ վիճակած պատաժմանը բաժնեմաս
Արագագիր	Ծանոթեցնելու եւ համապատեցնելու հարցին:				

Հավելված 1: Թեստի առաջադրանքների բաշխումը ըստ կենսաբանության հիմնական բաժինների, թևանների, ենթաբնանների

Հ/Հ	Կենսաբանության հիմնական բաժինները, թևանները, ենթաբնանները	Առաջարկելու քայլություն
1.	ԲՈՒՅԱԵՐ, ՄՆԿԵՐ	6
1.2	Արմատ: Առանցքային և կմնած արմատային համակարգեր: Արմատի գոտիները (հատվածները): Արմատի ձևափոխությունները:	
1.3	Հնձյուղներ և բողոքներ: Հնձյուղի կառուցվածքը և ֆունկցիաները: Բողոքների կառուցվածքը և տեսակները: Տերևարիենի բջջային կառուցվածքը: Տերևների ձևափոխությունները: Ցողունի կառուցվածքը (արտաքին և ներքին) և ֆունկցիաները: Հնձյուղի ձևափոխությունները:	
1.4	Ծաղկի: Ծաղկի կառուցվածքը: Սիասեռ, երկսեռ և ամսեռ ծաղիկներ: Սիատուն և երկտուն բույսեր: Երկարի բույսերի սերմների կառուցվածքը: Սիաշաքի բույսերի սերմների կառուցվածքը: Սիաշաքի և երկարի բույսերի դասերի բնութագիրը:	
1.5	Մնկեր: Մնկերի ընդիհանուր բնութագիրը և կառուցվածքը:	
2.	ԿԵՆԴԱՔՆԵՐ	7
2.1	Նախակենդաներ: Հողարափիկ ինֆուզորիա (կենսամիջավայրը, կառուցվածքի և կենսագործունեության առանձնահատկությունները):	
2.2	Աղեխորշավորների տիպ: Քաղցրահամ ջրերի պոլիա հիդրայի արտաքին և ներքին կառուցվածքի և կենսագործունեության առանձնահատկությունները: Հիդրայի բազմացումը:	

2.3	Տափակ որդերի տիպ: Սպիտակ պլանարիս (կենսամիջավայրը, արտաքին և ներքին կառուցվածքի, սմնառության, բազմացման և զարգացման առանձնահատկությունները):	
2.4	Օղակավոր որդերի տիպ: Անձրևորդ (կենսամիջավայրը, արտաքին կառուցվածքը, մաշկամկանային պարկը, մարմնի խոռոչը, մարսողության օրգանները, արտաքրության, արյունատար, նյարդային համակարգերը, բազմացումը):	
2.5	Հողվածուամիների տիպ: Սիցատներ: Արտաքին կառուցվածքը: Սիցատների բազմացումը և զարգացումը:	
2.6	Ջորդավորների տիպ: Ջորդավորների հիմնական առանձնահատկությունները:	
2.7	Ձկներ: Ձկների արտաքին կառուցվածքը: Ձկների ներքին օրգանները: Ձկների բազմացումը և զարգացումը:	
2.8	Երկկենցաղներ: Երկկենցաղների արտաքին կառուցվածքը: Երկկենցաղների կմախըր և մկանունը: Երկկենցաղների ներքին օրգանները: Երկկենցաղների բազմացումը և զարգացումը:	
2.9	Սորումներ: Սորումների արտաքին կառուցվածքը: Սորումների ներքին կառուցվածքը (կմախըր, մարսողական, շնչառական, արյունատար, արտաքրության համակարգերը, նյարդային համակարգը և զգայարակները): Սորումների բազմացումը:	
2.10	Թռչուններ: Թռչունների արտաքին կառուցվածքը: Թռչունների կմախըր և մկանունը: Թռչունների ներքին օրգանները (մարսողական, շնչառական համակարգերը, արյան շրջանառությունը, արտաքրությունը): Թռչունների նյարդային համակարգը և զգայարանները: Թռչունների բազմացումը և զարգացումը:	
2.11	Կարճասուններ: Կարճասունների արտաքին կառուցվածքը, կարճասունների կմախըր և մկանունը: Կարճասունների ներքին օրգանները: Կարճասունների բազմացումը և զարգացումը:	

4.4.4	Օրգանիզմների հարմարվածությունը որպես բնական ընտրության արդյունք և դրա հարաբերական բնույթը:	
4.4.5	Օրգանական աշխարիի ծագման միասնության և էվոլյուցիայի ձևաբանական (հոմոլոգ և անալոգ օրգաններ, ռուղիմենտներ, ատավիզմներ) և սաղմնաբանական ասպացույցները:	
4.4.6	Էվոլյուցիայի գլխավոր ուղիները:	
4.5	Էկոլոգիայի հիմունքները:	
4.5.1	Սիցավայրի էկոլոգիական գործոնները (ոչ կենսածին, կենսածին և մարդածին): Պոպուլյացիա, նրա թվաքանակը, խտությունը, տարիքային և սեռական կազմը:	
4.5.2	Սննդան շրամներ և ցանցեր: Էկոլոգիական համակարգեր (կենսաերկրացենոզներ), նրանց բաղադրիչները՝ արտադրողներ, սպառողներ, քայլայողներ:	
4.5.3	Նյութերի շրջապտույտը և էներգիայի հոսքը էկոհամակարգերում: Հասկացություն կենսաբանական արտադրանքի մասին: Առաջնային և երկրորդային կենսաբանական արտադրանք: Էկոլոգիական բուրգեր:	
4.6	Կենսողություն, նրա կառուցվածքը և ֆունկցիաները:	
4.6.1	Կենսողություն մոդուլների կենդանի թաղանքն է: Կենսողությի սահմանները:	
4.6.2	Կենդանի նյութի դերը, հատկությունները և ֆունկցիաները կենսողություն: Կենսածին տարրերի շրջապտույտը:	
4.7.	Օրգանիզմների միջև փոխհարաբերությունները:	
4.7.1	Օրգանիզմների միջև փոխհարաբերությունների ձևերը՝ գիշատչություն, մակարուծություն, մոցակցություն, փիշահավետ հարաբերություններ՝ սիմբիոզ, չեզոք հարաբերություններ՝ չեզոքություն:	
	Ընդամենը	80

4.3.3	Գամետների մարդության օրենքը (վարկածը) և դրա բջջաբանական հիմնավորումը: Վերլուծող խաչաերում: Երկիրքիդային և բազմահիրքիդային խաչաերում: Մենդելի երրորդ՝ գեների անկախ բաշխման օրենքը:	
4.3.4	Ժառանգականության բրոմոստմային տեսությունը: Շղթայակցված ժառանգում: Մորգանի օրենքը: Տրամադիտաչում:	
4.3.5	Սեղի գենետիկա: Հոմոգամետություն և հետերոգամետություն: Ցիտոպլազմային ժառանգականություն:	
4.3.6	Փոփոխականության հիմնական ձևեր: Ֆենոտիպային (մոդիֆիկացիոն) փոփոխականություն: Արտաքին գործոնների ազդեցությունը հատկանիշների և հատկությունների զարգացման վրա:	
4.3.7	Մոդիֆիկացիոն փոփոխականության վիճակագրական օրինաչափությունները: Վիճակագրական շարք և կոր: Ուսակցիայի նորմա:	
4.3.8	Գենոտիպային փոփոխականության: Համակցական փոփոխականություն: Մուտացիաների դասակարգումը: Մուտացիաներ՝ գենոմային, բրոմոստմային, գենային: Մուտացիաները մարմնական և սեռական բջջներում:	
4.4	Էվոլյուցիոն տեսություն:	
4.4.1.	Օրգանական աշխարհի էվոլյուցիայի մասին Զ. Դարվինի հիմնադրույթները:	
4.4.2	Էվոլյուցիայի գործոնները, փոփոխականության դերը էվոլյուցիայում: Գոյության կրիվ: Բնական ընտրությունը որպես էվոլյուցիայի ուղղորդող գործոն, բնական ընտրության ձևերը (շարժական և կայունացնող):	
4.4.3	Տեսակը որպես էվոլյուցիայի միավոր: Տեսակի չափանիշները և կառուցվածքը: Պոպուլյացիան որպես տեսակի կառուցվածքային միավոր:	

3.	ՄԱՐԴ	16
3.1	Նյարդային համակարգ և նրա բաժինները: Նեյրոնների կառուցվածքը, հատկությունները և տեսակները: Ուղեկից բջջները: Նյարդային համակարգի բաժինները: Ուկիներո, ունկիներուային աղող: Ողնուղեղի կառուցվածքն ու ֆունկցիաները: Գլխուղեղի բաժինները, ուղեղաբուն, ուղեղիկ: Գլխուղեղի մեծ կիսագնդերի կառուցվածքը: Վեգետատիվ նյարդային համակարգ: Պիմապարիկ նյարդային համակարգ:	
3.2	Ներզատական գեղձեր: Մակուլեն, մակերիկամներ, վահանագնդ, ենթաստամոքսային և սեռական գեղձեր, դրանց ֆունկցիաները և ֆունկցիայի խանգարումները:	
3.4	Արյունի որպես օրգանիզմի ներքին միջավայրի մաս ու նրա նշանակությունը: Արյուն: Արյան կազմը, արյան պլազման և նրա բաղադրությունը: Երիքոցիտներ, լեյկոցիտներ, թրոմբոցիտներ: Արյան խմբեր:	
3.4	Բնումիտես: Իմունիտետի տեսակները:	
3.5	Արյան շրջանառություն: Արյունատար անորների կառուցվածքը և ֆունկցիաները: Արյան շրջանառության մեծ և փոքր շրջանները: Մրտի կառուցվածքը: Մրտի աշխատանքը և կարգավորումը:	
3.6	Շնչառություն: Շնչառության օրգաններ, կառուցվածքը և նշանակությունը: Շնչառական շարժումներ և դրանց կարգավորումը: Գագափոխանակությունը բութերում և հյուսվածքներում:	
3.7	Մարսողություն: Մարսողության օրգանների կառուցվածքը: Մարսողությունը բերանի խոռոչում, թքարտադրության կարգավորումը: Մարսողությունը ստամոքսում, ստամոքսի հյուրազատության կարգավորումը: Ենթաստամոքսային գեղձի, լյարդի և աղիքային գեղձերի դերը մարսողության գործընթացում: Մարսողությունը աղիներում: Ներծծում:	
3.8	Վիտամիններ: Վիտամինների տեսակները և դրանց նշանակությունը:	

3.9	Արտազատություն: Արտազատության օրգանների կառուցվածքը: Սիզագոյացում: Սիզարձակում:	
3.10	Մաշկ: Մաշկի ֆունկցիաները և կառուցվածքը: Օրգանիզմի ջերմաստիճանի կայունությունը: Մաշկի ջերմակարգավորիչ դերը:	
3.11	Հենաշարժիչ համակարգ: Հենաշարժիչ համակարգի նշանակությունը: Ուսկրերի միացման տեսակները: Մարդու կմախըրը: Մկաններ, կառուցվածքը և ֆունկցիաները:	
3.12	Զգայական համակարգեր: Վերլուծիչի կառուցվածքը: Ընկապիչների դասակարգումը և հարմարումը: Տեսղական վերլուծիչ: Լուղական վերլուծիչ: Անդաստակային վերլուծիչ: Մաշկային և մկանային զգայություն: Հոտառություն և ճաշակելիք:	
3.13	Վարքի ռեֆլեքսային տեսություն: Ոչ պայմանական ռեֆլեքսներ: Պայմանական ռեֆլեքսներ:	
4.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	51
4.1	Բջջաբանության հիմոնքները	
4.1.1	Բջջի քիմիական բաղադրությունը: Անօրգանական նյութեր (ջուր, աղեր): Սպիտակուցների քիմիական բաղադրությունը, կառուցվածքը, հատկությունները և ֆունկցիաները: Ածխացրեր, ճարպեր: Նուկլինարբություն՝ ԴՆԹ, ՌՆԹ (նուկլինարբությունի կենսաբանական դերը, ԴՆԹ-ի կառուցվածքը, կրկնապատկումը, ՌՆԹ-ի կառուցվածքը, ֆունկցիաները):	
4.1.2	Բջջաբանության կառուցվածքն ու ֆունկցիաները (բջջաբաններ, պլազմային բաղանք, ֆազոցիտոզ, պինցիտոզ): Ցիտոպլազման և նրա օրգանիզմները: Բջջակորիք: Պրոկարիոտ բջջներ: Կյանքի ոչ բջջային ձևեր՝ վիրուսներ:	

4.1.3	Նյութերի փոխանակությունը, ԱԵՖ (նյութերի փոխանակության ֆունկցիաները, ԱԵՖ-ի դերը բջջի էներգետիկ և պլաստիկ փոխանակությունը բջջում): Էներգետիկ փոխանակությունը բջջում: ԱԵՖ-ի սինթեզը (գլիկոլիզ, թթվածնային ճեղքում): Պլաստիկ փոխանակությունը: Սպիտակուցի կենսապինթեզը (սպիտակուցի կենսասինթեզի նշանակությունը, ԴՆԹ-ի զաղունագիրը, տրանսկրիպցիա, փոխադրող ՌՆԹ, մատրիցային սինթեզի ռեակցիաներ, տրանսլյացիա, ֆերմենտների դերը, էներգետիկան):	
4.1.4	Ֆոտոսինթեզ (լուսային և մքնային փուլեր, նշանակությունը կենդանի բնության համար): Քենսութեզ:	
4.2.	Օրգանիզմների բազմացումը և անհատական զարգացումը	
4.2.1	Բջջի բաժանումը: Միտոզ:	
4.2.2	Օրգանիզմների բազմացման ձևերը (ամսեռ, սեռական բազմացում, սեռական բջիջների զարգացումը):	
4.2.3	Մեյոզ: Բեղմնավորում (կրկնակի բեղմնավորում, պարբենոգենեզ):	
4.2.4	Օրգանիզմների անհատական զարգացումը՝ օնտոգենեզ (սաղմի զարգացումը, հետսաղմնային զարգացումը):	
4.3	Գենետիկայի հիմոնքները	
4.3.1	Գենետիկայի հիմնական հասկացությունները: Հատկանիշներ և հատկությունները: Գեն և գենու: Օրգանիզմի գենոտիպը ու ֆենոտիպը, գենոփոնը: Դոմինանտ և ռեցեսիվ հատկանիշները: Հոմոզիգոտ և հետերօզիգոտ առանձնյակները: Ալելային գեներ:	
4.3.2	Սենդելի բացահայտած ժառանգման օրինաչափությունները: Հատկանիշների ժառանգման հիբրիդոլոգիական մեթոդը: Միահիբրիդային խաչասերում: Սենդելի առաջին՝ դոմինանտության (միակերպության) օրենքը: Սենդելի երկրորդ՝ ճեղքավորման օրենքը: Լրիվ և ոչ լրիվ դոմինանտություն: Միջանկյալ ժառանգում:	